

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճն էականորեն դանդաղել է մայիսին՝ կապված նախորդ ամիսներին բարձր աճ ապահովող գործոնի՝ ոսկերչական գործունեության ծավալների նվազման հետ: Մայիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 5.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով գրեթե կրկնակի չափով՝ 4.8 տոկոսային կետով: Արդյունքում կուտակային (հունվար-մայիս ամիսների) ՏԱՑ-ը նույնպես նվազել է՝ կազմելով 11.2%, հունվար-ապրիլի համեմատ դանդաղելով 2 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2024թ. հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.5 և 4.7 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 0.9 և 0.7 տոկոսային կետով: ՏԱՑ-ի դանդաղումը նախորդ ամսվա համեմատ հիմնականում պայմանավորված է եղել արդյունաբերության աճի դանդաղմամբ:


¹ Նախորդ ամիսների, ինչպես նաև 2023թ. ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-մայիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն²

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպը կտրուկ նվազել է: 2024թ. մայիսին արդյունաբերության աճը կազմել է 6.9%՝ շուրջ 9.7 տոկոսային կետով դանդաղելով նախորդ ամսվա համեմատ և մոտենալով նախորդ տարվա նույն ամսվա աճին: Արդյունքում հունվար-մայիս ամիսների աճը ևս դանդաղել է՝ հասնելով 22.0%-ի: Աճի դանդաղման պատճառը ոսկերչական գործունեության աճի տեմպի դանդաղումն է, որը սպասելի էր, քանի որ վերջինս իր բնույթով բավական

² Արդյունաբերության աճի նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

անկայուն և արտաքին գործոններից կախված երևույթ է: Հաջորդ ամիսներին արդյունաբերության աճի ցածր տեմպերը հավանաբար կպահպանվեն:

Արդյունաբերության հունվար-ապրիլ³ ամիսների աճը, որն արդեն իսկ որոշակիորեն դանդաղել էր, առավելապես պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 40.7% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 25.4 տոկոսային կետ: Ընդհանուր արդյունաբերությանը 24.3 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել մշակող արդյունաբերության ենթաճյուղում ներառված «հիմնային մետաղների արտադրություն» գործունեության տեսակի շուրջ 4.6 անգամ աճը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ վերջին ամիսների ոսկերչական գործունեությունը սկսել է ներկայացվել «հիմնային մետաղների արտադրություն» տողով:

Մշակող արդյունաբերության աճին էական դրական նպաստում են ունեցել նաև «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» և «էլեկտրական սարքավորանքի արտադրություն» գործունեության տեսակների համապատասխանաբար 9.4% և 60.9% աճերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերության աճին կազմել են 0.9 և 0.8 տոկոսային կետ:

Մշակող արդյունաբերության ոլորտում ՀՀ տնտեսության համար էական որոշ ենթաճյուղեր շարունակում են անկում ապրել: Այդպիսի ոլորտներից են սննդամթերքի արտադրությունը, որտեղ գրանցվել է 1.5% անկում, հագուստի արտադրությունը՝ 9.6%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 11.9% և այլն:


Հանքարդյունաբերության ոլորտում անկման տեմպերը խորանում են՝ հունվար-ապրիլին հասնելով 7.2%-ի՝ հունվար-մարտի 4.6%-ից: Ընդհանուր արդյունաբերության աճին հանքարդյունաբերության անկումը հակազդել է 1.5 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 13.4% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 2.1 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 6.1% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

³ Արդյունաբերության մայիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է մնալ բարձր մակարդակում և շարունակում է արագանալ: 2024թ. մայիսին շինարարության աճը կազմել է 18.1%՝ շուրջ 0.3 տոկոսային կետով արագանալով նախորդ ամսվա համեմատ: Իսկ հունվար-մայիս ամիսներին շինարարության աճը կազմել է 14.9%՝ արագանալով 1.2 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը պահպանվում է էականորեն ցածր մակարդակում: 2024թ. մայիսին ծառայությունների ոլորտի աճը կազմել է ընդամենը 2.8%, որը թեև շուրջ 2.0 տոկոսային կետով բարձր է նախորդ ամսվա

ցուցանիշից, սակայն էականորեն ցածր է թե՛ տնտեսության ընդհանուր ակտիվության աճից, թե՛ նախորդ տարվա ցուցանիշներից: Կուտակային՝ հունվար-մայիս ամիսների աճը ևս որոշակիորեն դանդաղել է՝ կազմելով 3.7%:

Ըստ հունվար-ապրիլ⁴ ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը շարունակում է պայմանավորված լինել «ֆինանսական և ապահովագրական գործունեության» ոլորտով, որի աճը կազմել է 16.8%, իսկ նպաստումը ընդհանուր ծառայությունների աճին՝ 4.6 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից և տեղեկատվության և կապի ոլորտից, որոնք նվազել են համապատասխանաբար 16.5%-ով և 7.6%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.1 և 1.7 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը և էականորեն դանդաղել է: Առևտրի ոլորտում մայիսին գրանցվել է 17.6% աճ, որն 9.6 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից: Հատկանշական է, որ արդյունաբերության աճի տեմպի կտրուկ դանդաղումը համընկել է առևտրի աճի դանդաղման հետ, և կապված է այն հանգամանքի հետ, որ ոսկերչական գործունեության աճն արտացոլվում էր նաև առևտրի ցուցանիշներում:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճը կտրուկ դանդաղել է նախորդ ամիսների համեմատ: 2024թ. մայիսին արտահանման աճը կազմել է 57.4%՝ էականորեն դանդաղելով նախորդ ամիսների համեմատ և ցածր լինելով նախորդ տարվա նույն ամսվա աճից։ Այս դինամիկան հուշում է, որ արտահանման բարձր աճ ապահովող ոսկերչական ապրանքների ներմուծման և արտահանման գործընթացը, որն արդյունաբերության կառուցվածքում սկսել է գրանցվել «հիմնային մետաղների արտադրություն» գործունեության տեսակում, զգալի նվազել է կամ գրեթե կանգ է առել։ Հունվար-մայիս ամիսներին արտահանման կուտակային աճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 155.8% (2.6 անգամ), սակայն եթե ոսկերչական ապրանքների գործունեությունը չվերականգնվի, ապա հաջորդ ամիսներին արտահանման աճերը զգալի ցածր կլինեն՝ հանգեցնելով կուտակային աճի նվազմանը։

2024թ. հունվար-ապրիլ⁶ ամիսների ընթացքում արտահանման աճը գրեթե ամբողջությամբ ապահովվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի շուրջ 9.0 անգամ աճի հաշվին։ Վերջինիս նպաստումը ընդհանուր արտահանման աճին կազմել է 188.1 տոկոսային կետ։ Թեև արդյունաբերության կառուցվածքում այս գործունեության տեսակը սկսել է դասվել «հիմնային մետաղների

⁵ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից։


⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել։

արտադրությունում», սակայն արտահանման կառուցվածքում այս փոփոխությունը դեռևս չի արտացոլվել:

Որոշակի աճեր են գրանցվել նաև «հանքահումքային արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալներում՝ համապատասխանաբար 19.3% և 25.3%՝ ընդհանուր արտահանման աճին նպաստելով 2.3 և 1.1 տոկոսային կետով:

Արտահանման աճին էական՝ 8.5 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների» արտահանման 80.5%-ով կրճատումը: Միևնույն ժամանակ մի շարք ապրանքատեսակների արտահանման ծավալներ նույնպես բացասական միտումներ ունեն, մասնավորապես՝ «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «պատրաստի սննդի արտադրանք», «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», որոնց արտահանման ծավալները նվազել են համապատասխանաբար 48.8%, 6.9%, 34.2% և 31.5% (նպաստումներ՝ 4.4, 0.9, 0.6 և 0.6 տոկոսային կետ):

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման դինամիկան եղել է արդյունաբերության և արտահանման աճերին համահունչ: Մասնավորապես՝ ներմուծման աճի տեմպը 2024թ. մայիսին դանդաղել է տասը անգամից ավելի՝ 210%-ից հասնելով 17.2%-ի: Կրկին, պատճառը ոսկերչական գործունեության դադարումն է: Ներմուծման անկումը հուշում է, որ ոսկերչական գործունեությունը հավանաբար չի շարունակվի հետագա ամիսներին:

2024թ. հունվար-ապրիլ ամիսների⁷ տվյալներով (երբ աճի կտրուկ դանդաղումը դեռևս արտացոլված չէր) ներմուծման աճը առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 10.8 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 121.0 տոկոսային կետով:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել նաև «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «մանածագործական իրեր» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի ներմուծման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.2, 0.9 և 0.3 տոկոսային կետ:

Մնացած ապրանքախմբերի նպաստումները ներմուծման աճին կա՛մ բացասական են, կա՛մ գրեթե զրոյական: Էական նվազում է գրանցվել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի ներմուծման ծավալներում՝ ընդհանուր ներմուծման աճին հակազդելով 11.8 տոկոսային կետով:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ⁸

Աշխատավարձի աճը, լինելով ցածր մակարդակում, շարունակում է դանդաղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 7.8%-ով (հունվար-մարտի համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով)՝ կազմելով 280,435 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.6%-ով (հունվար-մարտի համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով)՝ կազմելով 309,014 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը շարունակել է աճել ավելի բարձր տեմպով՝ 11.2%-ով, ավելին՝ հունվար-մարտ ամիսների համեմատ արագացել է 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 210,151 դրամ: Հատկանշական է, որ աշխատավարձերի աճի տեմպը, հատկապես մասնավոր հատվածում, էականորեն զիջում է նույն ժամանակահատվածի տնտեսական ակտիվության աճին՝ 13.2%-ին, ինչը նույնպես հուշում է, որ տնտեսական աճը ներառական չէ:

⁷ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-ապրիլին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժեւորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





2024թ. տարեսկզբին ՀՀ դրամի փոխարժեքը համեմատաբար կայուն է եղել, իսկ ապրիլ-մայիս ամիսներին որոշակիորեն արժևորվել է: Դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ ընթացիկ տարվա մայիսին արժևորվել է՝ մեկ դոլարի դիմաց հունվար-մարտ ամիսների միջին 403 դրամից դառնալով 388 դրամ: Արդյունքում փոքրացել է նախորդ տարվա համեմատ դրամի արժեզրկված լինելու չափը՝ հունվար-մայիսին կազմելով 1.8%: Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ նույնպես ՀՀ դրամն արժևորվել է ապրիլ-մայիս ամիսներին: Եվրոյի համեմատ հունվար-մայիս ամիսներին ՀՀ դրամը միջինում եղել է արժեզրկված (1.9%-ով), իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժևորված (շուրջ 18.6%-ով):

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը դանդաղել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-մայիսին կազմել են 1,029.0 մլրդ դրամ՝ աճելով 7.7%-ով, որը հունվար-ապրիլի համեմատ ցածր է 1.6 տոկոսային կետով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը նույնպես դանդաղել է: Մայիսին հարկերի և տուրքերի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 155.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մայիսի համեմատ ավելի է ընդամենը 0.8%-ով: Հունվար-ապրիլի համեմատ հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղել է 1.4 տոկոսային կետով՝ հունվար-մայիսին կազմելով 7.9%: Հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձը նախորդ տարվա ցուցանիշում ներառելու պարագայում (քանի որ ընթացիկ տարվա հարկային եկամուտների ցուցանիշում այն ներառված է) ընդհանուր եկամուտների աճը կկազմի 5.4%, իսկ հարկային եկամուտներինը՝ 5.1%, որը նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշից ցածր է 1.0 տոկոսային կետով:

Ոչ հարկային եկամուտների գծով գրանցվել է 5.8% աճ, իսկ պաշտոնական դրամաշնորհները շարունակել են նվազել՝ գրանցելով 11.7% անկում:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը⁹, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-մայիսին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 19.9%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ շուրջ 3.7 անգամ) և շահութահարկի (աճը՝ 3.3%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.9, 2.4 և 0.7 տոկոսային կետ: Հունվար-ապրիլի համեմատ մեծացել է ԱԱՀ-ի անկման տեմպը՝ 3.5%-ից հունվար-մայիսին դառնալով -5.4%, ինչն էլ մեծամասամբ պայմանավորել է հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղումը:

Ակցիզային հարկի գծով մուտքերը հունվար-մայիս ամիսներին նույնպես նվազել են շուրջ 9.6%-ով՝ ընդհանուր հարկային եկամուտների աճին հակազդելով 0.5 տոկոսային կետով:


⁹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-մայիս		2024թ. հունվար-մայիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	19.7	19.7	7.9	7.9
Ավելացված արժեքի հարկ	21.4	6.6	-5.4	-1.7
Ակցիզային հարկ	29.4	1.5	-9.6	-0.5
Շահութահարկ	45.1	8.5	3.3	0.7
Պետական տուրք	-55.1	-3.4	23.0	0.5
Մաքսատուրք	96.5	1.9	4.4	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-75.5	-3.2	267.4	2.4
Այլ հարկեր	40.5	1.1	12.6	0.4
Շրջանառության հարկ	32.4	0.8	16.5	0.4
Եկամտային հարկ	18.7	4.6	19.9	4.9
Սոցիալական վճարումներ	47.4	1.5	16.1	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը նույնպես դանդաղել է, սակայն եղել է բավական բարձր: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-մայիս ամիսներին կազմել են 1,029.1 մլրդ դրամ՝ աճելով 20.4%-ով: Ընթացիկ ծախսերի աճը կազմել է

19.4%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 17.3 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների աճի տեմպը ևս բավական բարձր է եղել՝ կազմելով 29.3% և ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.1 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի եկամուտները և ծախսերը գրեթե հավասար են եղել: Հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի ծախսերի աճն էականորեն գերազանցել է եկամուտների աճին, սակայն դրանց ծավալները գրեթե հավասար են եղել, ինչի արդյունքում պետական բյուջեն եղել է գրեթե հաշվեկշռված՝ բավական փոքր՝ 0.1 մլրդ դրամի չափով պակասուրդով:

5.4. Պետական պարտք


2024թ. մայիսին ՀՀ պետական պարտքի ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) մայիսի վերջի դրությամբ կազմել է 12.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մայիսի համեմատ աճելով 9.8%-ով: Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 11.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 10.6%-ով:

Պարտքի աճը տեղի է ունեցել ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 26.4% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) նվազել է 1.5%-ով: Արդյունքում մայիսի վերջի դրությամբ ՀՀ պատմության մեջ առաջին անգամ ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի կշիռը գերազանցել է 50%-ը:

2024թ. մայիսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է: Պետական կարճաժամկետ

պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2024թ. մայիսին կազմել է 9.4%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա մայիսի համեմատ՝ 2.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ընթացիկ տարվա ապրիլի համեմատ աճել է 0.05 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա մայիսի համեմատ նվազել է 1.7 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճն ընթացիկ տարվա ընթացքում առաջին անգամ եղել է դրական: 2024թ. սկզբից գնաճը գտնվում էր բացասական տիրույթում, սակայն մայիսին

գրանցվել է դրական ցուցանիշը, որը սակայն բավական ցածր է՝ 0.3%: Կենտրոնական բանկը հունիսին շարունակել է դրամավարկային պայմանների մեղմացման քաղաքականությունը՝ հիմնական տոկոսադրույքը նվազեցնելով ևս 0.25 տոկոսային կետով և սահմանելով այն 8.0%: Ակնկալվում է, որ այս քաղաքականության ուղղության պահպանումը պետք է հանգեցնի գնաճի որոշակի արագացմանը, որը սակայն, ըստ ԿԲ կանխատեսումների, մինչև տարեվերջ կմնա ԿԲ թիրախից ցածր մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 13.9%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ աճել է շուրջ 3.3%-ով: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 14.9% և 10.9%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. մայիսին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 6.7 տոկոսային կետով: Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 18.3% (ապրիլի 5.0%-ից հետո), որը ընդհանուր ավանդների աճին նպաստել է 3.8 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը պահպանվել է բարձր մակարդակում: 2024թ. մայիսին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 19.8%-ով՝ նախորդ տարվա աճից բարձր լինելով ավելի քան երկու անգամ: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալը նույնպես աճել է, սակայն ավելի փոքր տեմպով՝ շուրջ 4.4%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 20.0%-ով և 15.0%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 19.1 և 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ իրավաբանական անձանց, և՛ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 20.4% և 19.6%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 10.1 և 9.9 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ¹⁰




Մայիսին վարկերի աճին ամենամեծ նպաստում է ունեցել սպառողական վարկերի աճը, որը կազմել է 5.4 տոկոսային կետ՝ գերազանցելով հիպոթեքային վարկերի 4.8 տոկոսային կետ նպաստմանը: Այս վարկատեսակների աճերի տեմպերը բավական բարձր են՝ համապատասխանաբար 24.9% և 22.5% ու գերազանցում են տնտեսության մյուս կարևոր փոփոխականների աճի տեմպերին, ինչպիսիք են տնտեսական աճը, աշխատավարձերի աճերը և այլն: Սպառողական վարկերի աճի տեմպը արագացման միտում ունի, մինչդեռ հիպոթեքային վարկերի աճը դանդաղում է:

Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալները նույնպես աճում են հիմնական ոլորտներում, բացի արդյունաբերությունից, ուր ուղղվող վարկերի ծավալները 2022 թվականից սկսած նվազում են, իսկ 2024թ. մայիսին դրանց նվազման չափը կազմել է 1.2%՝ պայմանավորված ինչպես մշակող արդյունաբերության (նվազումը՝ 4.4%), այնպես էլ հանքարդյունաբերության (նվազումը՝ 16.8%) ոլորտներում վարկավորման ծավալների նվազմամբ:

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է նվազել: 2024թ. հունվար-ապրիլ ամիսներին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 327.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազելով 54.5%-ով: Վերջինս պայմանավորված է ինչպես ներհոսքի նվազմամբ (18.2%-ով), այնպես էլ արտահոսքի աճով (1.5%-ով):

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճը կտրուկ դանդաղել է: 2024թ. մայիսին ՏԱՑ-ը կազմել է 5.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 4.8 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ը նույնպես դանդաղել է՝ կազմելով 11.2%: ՏԱՑ-ի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ոսկերչական գործունեության կտրուկ նվազմամբ կամ դադարեցմամբ: Վերջինս էլ իր հերթին սպասելի երևույթ էր, քանի որ ինչպես նշել ենք նախորդ տեղեկանքներում, տնտեսական բարձր աճ ապահովող այդ գործունեության տեսակը իր բնույթով բավական անկայուն է և արտաքին գործոնների փոփոխության արդյունքում կարող է կտրուկ կանգ առնել, ինչը և տեղի է ունեցել մայիսին:

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. Ոսկերչական գործունեության կտրուկ նվազման արդյունքում դանդաղել են նաև արտահանման և ներմուծման աճի տեմպերը: Ընդ որում, ներմուծման աճի տեմպի կտրուկ անկումը հուշում է, որ ոսկերչական ապրանքներ այլևս չեն ներմուծվում, և ենթադրվում է, որ այդ գործունեության շարունակումը հետագա ամիսների ընթացքում քիչ հավանական է:

3. Հարկային եկամուտների աճի տեմպը նույնպես կտրուկ նվազել է: Տնտեսական ակտիվության աճի կտրուկ դանդաղման պայմաններում նվազել է նաև հարկային եկամուտների աճի տեմպը՝ մայիսին հասնելով գրեթե զրոյական աճի՝ 0.8%-ի (իսկ եկամտային հարկի վերադարձը հաշվի առնելու դեպքում՝ 0.2%-ի): Արդյունքում հունվար-մայիս ամիսների հարկային եկամուտների աճը կազմել է 7.9%, իսկ հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձը հաշվի առնելու դեպքում՝ 5.1%: Վերջինս բավական ցածր է ՏԱՑ-ից, որի պատճառն այն է, որ հիմնական տնտեսական աճը պայմանավորող գործունեությունը, չի հարկվում անհրաժեշտ չափով, սակայն այդ ուղղությամբ կառավարության կողմից քայլեր չեն ձեռնարկվում: Միևնույն ժամանակ, մայիսի ՏԱՑ-ի դանդաղումն էլ ավելի է նվազեցրել հարկային եկամուտների աճի տեմպը, որի պահպանումը կարող է խնդիրներ առաջացնել բյուջեի կատարման տեսանկյունից:

4. Սպառողական վարկերի աճի տեմպը շարունակում է արագանալ: 2024թ. սպառողական վարկերի աճի տեմպը բավական բարձր է եղել և վերջին ամիսներին շարունակել է արագանալ՝ մայիսին հասնելով 24.9%-ի: Հաշվի առնելով տնտեսական ակտիվության, ինչպես նաև աշխատավարձերի աճի տեմպի դանդաղումը և էականորեն ցածր տեմպը՝ վարկերի բարձր աճը խնդրահարույց է և կարող է միջնաժամկետում կայունության ռիսկեր առաջացնել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: